



ԷԹԻԿԱՅԻ
ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒԲԻԼԻԶԱՑՆՈՒՄ Է



Անտուան Ֆրերո, Վեոլիայի նախագահ եւ գլխավոր գործադիր տնօրեն

իրականացվի ազգային եւ միջազգային չափանիշների համաձայն, ինչպես նաեւ համապատասխանի միջազգային կազմակերպությունների առաջարկություններին, մասնավորապես՝ ինչ վերաբերում է հիմնարար սկզբունքներին հետևելուն, պետք է հաշվի առնել մշակութային բազմազանությունը եւ շրջակա միջավայրի պահպանությունը:

Այս փաստաթուղթը Վեոլիայի բոլոր աշխատակիցների համար վարքագծի վերաբերյալ տեղեկանք է, ընկերության բոլոր մակարդակներում եւ հաստատված բոլոր երկրներում, քանի որ կատարել մեր գործառույթները պրոֆեսիոնալ կերպով, հարգել մեր հաճախորդներին, մեր ստանձնած պարտավորություններին հավատարիմ մնալը, այն ամենն է ինչ իրենից ներկայացնում է պատշաճ կերպով մեր աշխատանքի կատարումը:

«ԱՅՍ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ ՎԵՈՒԻԱՅԻ ԲՈՒՈՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՔԱԳԾԻ ՏԵՂԵԿԱՆՔ Է»

ԱՐՓՈՓԱԳԻՐ	
4	ՄԵՐ ԳՈՅՈՒԹՅԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ
6	ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ
8	ՄԵՐ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ
11	ՄԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
18	ՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Ամենուր, որտեղ «Վեոլիա»-ն գործունեություն է ծավալում, համաձայն 2019 թվականի ապրիլի 18-ին որդեգրած գոյություն ունենալու պատճառի, Ընկերությունը միտված է առաջ մղել իր առանձնահատուկ արժեքները, յուրաքանչյուր երկրին բնորոշ օրենսդրությունը և միջազգային ընկերությունների կողմից որդեգրած կանոնները՝ նպաստելով վերջիններին հետ համագործակցությանը:

Անկախ աշխարհագրական համատեքստից, անկախ տնտեսական եւ ֆինանսական վիճակից, մեր գործունեությունը պետք է

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Էթիկայի այս ուղեցույցը հույժ կարևոր է «Վեոլիա» ընկերության համար: Այս գործիքի միջոցով «Վեոլիա» ընկերությունը ցանկանում է առաջ մղել իր արժեքները թե՛ Ընկերության ներսում, թե՛ գործընկերների շրջանում գոյություն ունենալու պատճառի համատեքստին համահունչ:

Է բնական պայարների տնտեսական կառավարման, կլիմայի փոփոխության դեմ պայքարի, աղտոտման նվազեցման, կենսաբազմազանության պահպանման եւ զարգացման, առողջության բարելավման եւ բնակչության բարեկեցության բարձրացման մեջ:

Քանի որ գրույի արժեքները ցածրացվում են ինչպես վարքագծի կանոններում, այնպես էլ գործողություններում, այս տեղեկանքը վերաբերվում է առօրյա էթիկայի պահպանման պայմանների ստեղծմանը, ինչը Վեոլիայի համար կառավարման առանցքում է գտնվում: Վեոլիան էթիկայի հետևորդ է, ով հաշվետու է այս կոչմանը եւ իր կողմից հռչակված արժեքներին՝ նպաստելով դրա օրինական հաստատմանը ընկերությունում:

Որպես ընկերություն, որի գլխավոր գրասենյակը Ֆրանսիայում է եւ, որը գործում է շատ երկրներում, Վեոլիան գիտակցում է իր պարտականությունները, ձգտելով պահպանել ստորեւ ներկայացված վարքագծի արժեքներն ու կանոնները աշխատակիցների շրջանում, ինչպես նաև նպաստել դրա տարածմանը այլ շահագրգիռ կողմերի շրջանում, մասնավորապես իր հաճախորդների, մատակարարների եւ բնակչության այն շրջանում, որտեղ կազմակերպությունը գործում է:

Էթիկական ուղեցույցը, որն իր մեջ ներառում է Վեոլիայի արժեքների տարածումը կազմակերպության ներսում, հանդիսանում է էթիկական վարքագծի էտայրն, ընկերության մեջ վարվելակերպի կողմնորոշման և համախմբման գործիք: Այն նաեւ նպատակ ունի վստահության մթնոլորտ հաստատել շահագրգիռ կողմերի միջև: Արժեքները, ինչպիսիք են վարքագծի կանոնները եւ դրանց հետեւանքները, հանդիսանում են իրավական եւ հեղինակային ռիսկերը կանխարգելելու ընդհանուր պահանջների մի մաս, եւ Վեոլիայի համար գլխավոր ռազմավարական խնդիր է իր ցանկացած մասնաճյուղի ներսում:

Այս ուղեցույցը, որը ներառում է Վեոլիայի կառավարման մեջ ինտեգրված էթիկայի կանոնները, նպատակ ունի հետևել. - Վեոլիային հատուկ արժեքներին և վարքագծի կանոններին, - Միջազգային նախաձեռնություններին, որոնց անդամակցում է գրույալ, ներառյալ ՄԱԿ-ի միջազգային պայմանագիրը, մարդու միջազգային իրավունքները եւ ՏՀԶԿ-ի բազմազգ ձեռնարկությունների ուղեցույցները, - Տեղական օրենսդրությանը, բոլոր այն երկրներում, որտեղ հաստատված է:

Վեոլիան գործում է ջրի, մաքրության եւ էներգիայի ոլորտներում՝ ոլորտներ, որոնք զարգացման գլխավոր հենակետերն են:

Այս բարդ, բազմամշակութային եւ զարգացող աշխարհում, տվյալ ուղեցույցը, որը հիմնվում է ընդհանուր էթիկայի հիմունքների վրա, հիմք է հանդիսանում բոլոր աշխատակիցների համար: Այն պետք է աշխատակիցներին թույլ տա լինել այդ արժեքների երաշխավորը եւ կատարել իրենց առաքելությունները՝ գիտակցելով իրենց իրավունքներն ամբողջությամբ, ինչպես նաեւ իրենց պարտականությունները՝ ընկերության եւ նրա շահագրգիռ կողմերի նկատմամբ:

Քանի որ բնապահպանական ծառայությունները կազմակերպության գործընթացների առանցքն են, Վեոլիան նպաստում է շրջակա միջավայրի պահպանմանը, ինչպես նաեւ տնտեսական զարգացմանը, եւ ներգրավվում



ՄԵՐ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ

Հավատարիմ մնալով բոլոր գործընկերներին ծառայելու իր պարտավորությանը՝ «Վեոլիա» ընկերությունն արձանագրել է գոյություն ունենալու պատճառը: Գրուպի տնօրենների խորհրդի կողմից 2019 թվականի ապրիլի 18-ին ընդունված դիրքորոշման համաձայն վերահիշյալ պարտավորությունը չի սահմանափակվում զուտ սին կարգախոսով, այլ արտացոլվում է ամբողջական տեքստում:

ՆԵՐՎԱՅԱՑՈՒՄ

«Վեոլիա» ընկերության գոյություն ունենալու պատճառը հետևյալն է՝ նպաստել մարդկության առաջընթացին՝ ՄԱԿ-ի կողմից սահմանված կայուն զարգացման առաջադրանքների համատեքստին համահունչ, որպեսզի բոլորի համար ապահովվի լավագույն և առավել կայուն ապագա: Այս հեռանկարով է «Վեոլիա» ընկերությունը տոգորվում «Ռեսուրսել աշխարհը» առաքելությամբ՝ ապահովելով շրջակա միջավայրի պահպանման իր ծառայությունները: «Վեոլիա» ընկերությունում համոզված են, որ մարդկության զարգացման շարունակականությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ տնտեսական, սոցիալական

և շրջակա միջավայրի ոլորտին առնչվող նպատակները դիտարկվում են որպես անբաժանելի միասնություն: Սույն համոզմունքը բնորոշ է այն Ընկերությանը, որը 1853 թվականին իր ստեղծումից ի վեր ցույց տվեց այնպիսի մոտեցում, երբ խմելու ջրի հասանելիությունը դարձել էր հանրային առողջապահության և կյանքի որակի հիմնական լծակը: Ջրի, աղբահանության և էներգիայի ոլորտներում գործունեություն ծավալելիս համաշխարհային կտրվածքով թե՛ մասնավոր, թե՛ հանրային հաճախորդներին ապահովում ենք այնպիսի լուծումներով, որոնք թույլ են տալիս դուրսացնել հիմնական ծառայությունների և բնական ռեսուրսների հասանելիությունը, պահպանել, օգտագործել և արդյունավետորեն վերանշակել

դրանք: Մեր տնտեսական մոդելը նախատեսում է շրջակա միջավայրի վրա լավագույն ազդեցություն թողնել և լավագույն ծառայել մեր հաճախորդներին:

Մենք միաժամանակ տեղի և զբոս Ընկերություն ենք՝ օժտված տեխնիկական ամուր հմտությամբ, ընդհանուր հմտությամբ և աշխատուժով: Ընկերության գործուղություններն ուրվագծվում են երկարաժամկետ կտրվածքով: Շնորհիվ մեր երկարամյա փորձառությանը, մատուցված ծառայությունների որակի և նորարարության մեծ հմտությանը՝ մեր հաճախորդներին երաշխավորում ենք երկարաժամկետ արդյունքների արձանագրման պարտավորություն:

Մենք ստեղծում ենք աշխատանքային այնպիսի միջավայր, ուր յուրաքանչյուրը, ի լրումն իր եկամտի, առողջապահության և աշխատանքի պայմանների անվտանգությանը, կարող է գտնել ծավալված գործունեության իմաստը, արժևորող համատեղ աշխատանքի պարտավորությունը և անձնական մասնագիտական աճը:

Դասընթացների միջոցով Վեոլիա ընկերությունն ապահովում է աշխատակիցների հմտությունների զարգացումը: Վերահիշյալ աշխատակիցների մեծամասնությունը կազմում են բանվորներն ու տեխնիկական մասնագետները: Ցանկացած երկրում և ծրագրում Ընկերությունը հիմնվում է վերջիններիս պատասխանատվության և ինքնակառավարման վրա՝ առաջ տանելով մասնագիտական հավասարությունը տղամարդկանց և կանանց միջև:

Անձնակազմի ներկայացուցչական ատյաններում Վեոլիա ընկերությունը խրախուսում է սոցիալական երկխոսությունը, որը նպաստում է աշխատակիցների կողմից մեր ծրագրին ընտելանալու գործընթացին:

Վեոլիա ընկերությունը հավատարիմ է գործող բոլոր օրենքներին և կանոնադրություններին: Դրանից զատ Ընկերությունը լայնորեն կիրառում է էթիկայի կանոնները՝ հավատարիմ մնալով իր արժեքներին, այն է՝ պատասխանատվություն, համերաշխություն, հարգանք, նորարարություն և հաճախորդի արժևորում:

Վեոլիա ընկերության բարգավաճումը հիմնված է իր գործում մասնակցող բոլոր կողմերին օգուտ բերելու սկզբունքի վրա, դրանք են՝ հաճախորդները, բաժնետերերը, աշխատակիցները, մատակարարները, ներկա և ապագա ազգաբնակչությունը, որոնք գտնվում են տարբեր տարածքներում, ուր առկա է Վեոլիա ընկերությունը:

Վերջինիս կատարողականությունը պետք է գնահատվի՝ ելնելով աշխատանքային տարբեր շառավիղներից, որոնք համապատասխանում են տարբեր հասարակություններին: Ընկերությունը մեծ ուշադրությամբ և պահանջատիրությամբ է վերաբերում աշխատանքի ցանկացած ծավալի: Այս մոտեցմամբ է Վեոլիա ընկերությունը պատրաստում իր ապագան՝ նախանշելով մարդկության համար կենսական նշանակություն ունեցող պահանջներին համապատասխան միջավայր:

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ

Վեոլիա ընկերության գոյություն ունենալու պատճառը բացատրվում է բոլոր մասնակից կողմերին, որպեսզի վերջիններս յուրացնեն դրա իմաստը և մասնակցեն վերահիշյալ ընթացակարգերի արդյունավետ իրականացմանը: Տնօրենների Խորհուրդը, որը հաշվի է նստում գոյություն ունենալու պատճառի հայեցակարգի հետ, գնահատում է դրա իրականացումը:

Տարեկան կտրվածքով Վեոլիա ընկերությունը հաշվետու է իր բազմածավալային կատարողականության համար: Սույն հաշվետվությունը ներառում է մոդելի կայունության հստակ ցուցանիշները: Դրանք թույլ են տալիս գնահատել հետևյալը՝

- տնտեսական և ֆինանսական կատարողականություն ,
- շրջակա միջավայրի վերաբերյալ աշխատանքի կատարողականություն,
- սոցիալական աշխատանքների կատարողականություն,
- հաճախորդների գոհունակության առումով կատարողականություն,
- էթիկայի և համապատասխանության առումով կատարողականություն:

Այս ցուցանիշների ընտրությունն արվում է ռազմավարական յուրաքանչյուր նոր փուլն ուրվագծելու ընթացքում՝ դրանք համապատասխանեցնելով տվյալ փուլի նպատակներին:

Մասնակից կողմերից կազմված կոմիտեն, որտեղ ընդգրկված են հաճախորդներին ներկայացնող հասարակական փորձագետները, մատակարարները, աշխատակիցները և ապագա սերունդների ներկայացուցիչները, կարծիք են ձևավորում՝ ուղղված ընտրության տնօրինությանը, որը նպաստում է ընտրության գոյության ունենալու պատճառի պատշաճ մարմնավորմանը:



ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Վեոլիայի հիմնական արժեքները՝ պատասխանատվությունը, համերաշխությունը, հարգանքը, նորարարությունն ու հաճախորդի կարևորության գիտակցումը, նրա տնտեսական, սոցիալական եւ բնապահպանական գործունեության հիմքն են:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բացի դրանից, Վեոլիան մտադիր է ակտիվորեն մասնակցել կայուն զարգացմանն ուղղված՝ ընկերության կառուցմանը: Որպես բնապահպանական ծառայությունների դերակատար, գրուպը իր առօրյա պատասխանատվությունն ուղղում է ընդհանուր շահի օգտին, ինչպիսիք են՝

- Տարածաշրջանների համաշափ զարգացումը,
- Բնակչության կենսապայմանների բարելավումը՝ իր գործունեությամբ, ինչպես նաեւ որպես իր գործունեության առանցք՝ շրջակա միջավայրի պահպանումը:

Կազմակերպության ներսում, Վեոլիան ձգտում է խթանել մասնագիտական հմտությունների զարգացումը, անձնական անվտանգության պայմանների բարելավումը (աշխատանքային վթարների կանխումը), աշխատանքային առողջությունը, ինչպես նաեւ գրուպի բոլոր աշխատակիցների եւ սարքավորումների անվտանգությունը, որոնք կառավարում է գրուպը:

Ի պատասխան՝ Վեոլիան ակնկալում է, որ բոլորն էլ հավատարիմ են ընկերությանը եւ հարգում են նրա արժեքները եւ այս ուղեցույցում ներառված վարքագծի կանոնները:

«ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՒ ԻՐ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ»

Վեոլիայի գործունեությունը բոլոր խոշոր խնդիրների շուրջ շարունակական առաջընթացի անընդհատության ապահովումն է:

ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ

Վեոլիան տոգորվել է «ռեսուրսավորել աշխարհը» առաքելությամբ: Քանի որ վերջինիս կողմից ծավալված գործունեությունը ծառայում է ընդհանուր շահերին և ընդունվում է բոլորի կողմից, այսարժեքը կիրառվում է այն հարաբերությունների շրջանակներում, որոնք ձևավորվել են բոլոր մասնակից կողմերի հետ, և Գրուպը ճիգ է գործադրում ակնկալիքները իրականություն դարձնելու հարցում: Այս մոտեցումը մասնավորապես արտահայտվում է նորանոր լուծումների որոնմամբ, որոնք կապահովեն հիմնական ծառայությունների մատուցումը բոլորին, ինչը Գրուպի համար հասարակական պատասխանատվություններից մեկն է:

ՀԱՐԳԱՆՔ

Այս արժեքն ուրվագծում է Գրուպում ընդգրկված բոլորի անհատական դրսևորումները և մարմնավորվում է օրինականության, Գրուպի ներքին կանոնների և այլոց հարգանքով, ինչն արտացոլվում է մասնավորապես մասնագիտական հավասարության մակարդակում և աշխատակիցների նկատմամբ պարկեշտ վերաբերմունքի միջոցով:

Օրենքին հավատարիմ մնալը հիշեցնում է, որ Վեոլիա ընկերության համար հույժ կարևոր է հետևել բարոյականության և ազնվության սկզբունքներին: Դրանք քրեորեն հետապնդում են կոռուպցիան թե՛ տեղի օերնքներով, թե՛ միջազգային իրավունքների մեծամասնությամբ:

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վեոլիան հետազոտությունները եւ նորարարությունները պահում է իր ռազմավարության կենտրոնում՝ իր հաճախորդների, շրջակա միջավայրի եւ հասարակության համար կայուն լուծումներ մշակելու համար: Նորարարությունը հնարավորություն է տալիս գրուպին մշտապես փնտրել ավելի մեծ արդյունավետություն եւ որակ ունեցող ծառայություններ:

ՀԱՃԱԽՈՐԴԻ ԿԱՐԱՈՐՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒՄ

Վեոլիան խթանում է թափանցիկության եւ էթիկայի կանոնների ներդրմանը, որոնց օգնությամբ պետք է կառուցվի երկարատեւ, վստահելի հարաբերություններ հաճախորդների հետ՝ հիմնված ամբողջականության, փոխադարձ հարգանքի եւ խտրականության բացառման վրա: Վեոլիան ուշադիր է իր հաճախորդների նկատմամբ եւ հստակեցնում է նրանց տեխնիկական, տնտեսական, բնապահպանական եւ հասարակական ակնկալիքները՝ տրամադրելով հարմարեցված եւ նորարարական լուծումներ:

ՄԵՐ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ



ՄԵՐ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Իր գործունեության իրականացման համար Վեոլիան սահմանել է բոլոր մակարդակներում գտնվող աշխատակիցների համար կիրառելի կանոններ:

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ԵՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻՆ

Վեոլիայի համար համապատասխանությունը կարևոր պահանջ է: Այն հանգեցնում է այն մարմինների եւ ընթացակարգերի ստեղծմանը, որոնք թույլատրելի են դարձնում իրավական ռիսկերի հայտնաբերումը՝ օգտագործելով ընկերության նկատմամբ կիրառվող միջազգային, եվրոպական, ազգային ստանդարտները:

Համապատասխանությունը հանդիսանում է ընկերության համար կառավարման եւ ներքին զարգացման գործիք. որպես գործոն, այն

ամրացնում է իր անդամների համակցությունը՝ համապատասխանության մշակույթի շուրջ, որը համապատասխանությունը ստանդարտին դարձնում է արժեք: Այս կատարելու համար գրուպը իր աշխատակիցներին իրագել է դարձնում համապատասխան օրենքների եւ կանոնների համաձայն:

ՊԱՅՔԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԵՒ ՄԱՍՆԱՎՈՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԿԱՇԱՌԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ԵՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ ՎԱՃԱՌՔԻ ՎՐԱ

Վեոլիան մտադիր է պայքարել կոռուպցիայի դեմ բոլոր այն երկրներում, որտեղ գրուպը գործում է: Այս պայքարը ներառում է Գրուպի

«ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋ Է»

աշխատակիցների պարբերական իրազեկումը կանոնակարգերին, որոնց վրա հիմնված է Վեոլիան, որոնցից հատկանշական է 2016 թվականի դեկտեմբերի 9-ի օրենքը, որը հայտնի է որպես Սապինի II օրենք:

Վերոնշյալ օրենքով նախատեսված վարքագծի դրույթը սահմանում է նկարագրում է արգելված վարքագծի տեսակները՝ որպես կոռուպցիոն գործողությունների կամ առևտրի վրա ազդեցության հավանականություն:

Ինտեգրված ներքին նախագրուպական համակարգը, որը նախատեսված է Սապինի II օրենքով, «սահմանում է աշխատակիցների հաշվետվությունների հավաքագրումը ընկերության վարքագծի կանոններին հակասող վարքագծի կամ իրավիճակների առկայության մասին» եւ ընդգրկված է Վեոլիայի էթիկայի կանոնագիրքի, ինչպես նկարագրված է ստորև, «Խմբի արժեքներ եւ վարքագծի կանոնների իրականացում» բաժնում:

Ահազանգի վերաբերյալ այս դրվագը հասանելի է նաև երրորդ անձանց համար:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Աշխատողները պետք է կանխեն կամ խուսափեն այնպիսի իրավիճակից, որը ստեղծում կամ կարող է ստեղծել ակնհայտ հակասություն՝ նրանց անձնական շահերի եւ խմբի անդամների միջև: Գործընկերոջ անձնական շահը ներառում է առաջին հերթին իրեն, ի դեմս ծնողների, ընկերների, հարազատների, անձանց կամ կազմակերպությունների, որոնց հետ ունի կամ ունեցել է գործարար կամ մասնագիտական հարաբերություններ կամ կապ: Շահերի բախումն առաջանում է, երբ անհատական շահը միտում ունի ազդելու աշխատակցի որոշումների վրա եւ կասկածի տակ դնելու իր մասնագիտական պարտականությունների անկողմնակալ իրականացումը: Այսպիսով, հետևյալ իրավիճակներին պետք է հատուկ ուշադրություն դարձնել. եթե աշխատակիցը կամ նրա հարազատներից մեկը շահույթ է ստանում, ներառյալ նվերներն ու հրավերները, պետական պաշտոնյաներից, պատվիրատուից, մատակարարից, ենթակապալառուից, բիզնես գործընկերոջից կամ մրցակցից, կամ եթե աշխատողը

«ՊԱՅՔԱՐ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԲՈՒՈՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ, ՈՐՏԵՂ ԳՈՐԾՈՒՄ Է ԳՐՈՒՊԸ»

Նման օգուտ է տալիս իր հարազատներից մեկին, եթե նա ունի անմիջական կամ անուղղակի մասնակցություն, մանդատ կամ ֆինանսական հետաքրքրություն այն ձեռնարկությունում կամ կազմակերպությունում, որի հետ խմբակցությունը ունի գործարար հարաբերություններ կամ գտնվում է մրցակցային իրավիճակում կամ եթե նա նման գործունեություն է իրականացնում նման ընկերության կամ կազմակերպության հետ: Երբ աշխատակիցը այս երևույթների շուրջ հարցեր ունի, նա պետք է խորհրդակցի ըստ աստիճանահարգության, ով կկայացնի համապատասխան որոշումներ, որպեսզի խուսափի նման իրավիճակից եւ երաշխավորի գրուպի շահերը:

Քանի որ Վեոլիա ընկերությունը շատ է կարևորում կոռուպցիայի դեմ պայքարը, հակակոռուպցիոն ուղեցույցը դարձել է գործող էթիկայի ուղեցույցի միակ հավելվածը:

ԷԹԻՎԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒՐՄՆԵՐՈՒՄ

Վեոլիան էական է համարում իր աշխատակիցների կողմից ֆինանսական հարցերում էթիկական կանոնների հարգանքը, մասնավորապես, նրանց վերլուծական, արժեքների գնահատման եւ դրանցից պահանջվող գործողությունները: Դա ոչ միայն տուգանվելու ռիսկի կանխարգելման խնդիր է, այլև նրա գործընկերների վստահությունը ապահովելու, ինչը կարեւոր է կայունության համար:

ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Վեոլիան ձգտում է պահպանել գաղտնիությունը գրուպի շրջանակներում եւ իր պայմանագրերի կատարման մեջ, տվյալների, տեղեկատվության, նոու-հաուների, մտավոր եւ արդյունաբերական սեփականության իրավունքի եւ գաղտնի գործարքների գաղտնիությունը, որոնք կապված են իր գործունեության հետ:

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Վեոլիան մարդկանց եւ իր ակտիվների անվտանգությունը համարում է առաջնահերթություն: Աշխարհում ամենուրեք, գրուպը պարտավորվում է իր գործառույթների համատեքստում ապահովել իր աշխատակիցների պաշտպանությունը, ինչպես նաև ապահովել այն միջոցներով, որոնք անհրաժեշտ են նրա կայքերը, սարքավորումներն ու ոչ նյութական ժառանգությունը պաշտպանելու համար: Նմանապես, նա ուշադրություն է դարձնում իր հեղինակության պաշտպանմանը:

ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Մեկ այլ խնդրահարույց դրվագը Վեոլիա ընկերության համար բխում է 2017 թվականի մարտի 27-ին ընդունված օրենքից, որը վերաբերում է մայր Ընկերությունների և հրահանգ արձակող Ընկերությունների զգոնության պարտավորությանը: Ընկերությունների իրավաբանական խիստ անկախությունից զատ, օրենսդիրը ցանկանում է հաշվի առնել որոշ օպերատորներին միավորող տնտեսական կախվածությունը: Այսպես է Վեոլիա ընկերությունը տեսնում իր քաղաքացիական պատասխանատվությունը թե՛ սեփական և իր կողմից ուղակիորեն կամ անուղակիորեն վերահսկվող գործունեության առումով, թե՛ ենթակապալառուների կամ մատակարարների գործունեության կտրվածքով, որենց հետ Վեոլիան կայացրել է առևտրային հարաբերություն:

Համաձայն օրենքի՝ Վեոլիա ընկերությունը մշակել է զգոնության պլան, որը պարունակում է ռիսկերի հայտնաբերման ողջամիտ միջոցներ, ինչը թույլ է տալիս կանխարգելել մարդու իրավունքի և հիմնարար ազատության համատեքստում կոպտագույն խախտումները, կանխարգելել մարդկանց առողջությանը, անվտանգությանը և շրջակա միջավայրին սպառնացող ռիսկերը:

Քանի որ զգոնության պլանում ամրագրված միջոցները հիմնականում հղում են կատարում սույն ուղեցույցում արտաքուլված արժեքներին, վերահիշյալ արժեքներն այդ իսկ պատճառով ունեն ավելի մեծ կշիռ, ուստի այս փաստը հարկադրում է յուրաքանչյուրին խստորեն հավատարիմ մնալ դրանց:

Քանի որ զգոնության խախտման վերաբերյալ ահազանգերի հավաքագրման մեխանիզմը պարզապես հավելյալ ընթացակարգ է ի լրումն այս ուղեցույցում ամրագրված էթիկայի սկզբունքներին, Վեոլիա ընկերության կողմից էթիկայի կանոնների խախտման արձանագրելու դեպքում էթիկայի կոմիտեն հասցեատեր կհանդիսանա:



ՄԵՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրուպում գործող ստորաբաժանումները ներկայացնում են Վեոլիան եւ, հետեւաբար, պարտավոր են հարգել նրա արժեքները եւ կիրառել այս ուղեցույցում ներկայացված վարքագծի կանոնները՝ ի դեմս բոլոր շահագրգիռ կողմերի (աշխատակիցներ, հաճախորդներ, շահառուներ, ծառայություններ մատուցողներ, տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական կազմակերպություններ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, սպառողներ եւ շրջակա միջավայրի պահպանության ասոցիացիաների ներկայացուցիչներ...):

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԸ

Կանայք եւ տղամարդիկ սոցիալական, բնապահպանական եւ գործնական հմտությունների մեջ

Մեր աշխատակիցները ամեն օր բախվում են հասարակության կողմից նետված շրջակա միջավայրի եւ քաղաքային մարտահրավերների եւ պայքարում են մեր գրուպի հաջողությունների համար: Այդ իսկ պատճառով Վեոլիան աշխատում է, որպեսզի հնարավորություն ստեղծի հասնելու պրոֆեսիոնալ եւ մարդկային նպատակների, զարգացնելով բարձրակարգ եւ հավակնոտ սոցիալական մոդել: Վեոլիան, հետեւաբար, ձգտում է հիմնարդել իր

սոցիալական գործողությունները չորս հիմնական սյուների վրա՝ հավասարության, համերաշխության, աշխատողների աշխատանքի ընդունելիության հնարավորության եւ առողջության ու անվտանգության պահպանման:

Երաշխավորել սոցիալական հավասարությունը

Այն վերաբերում է այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք թույլ կտան ավելի լավ ճանաչել, թե յուրաքանչյուր աշխատակից ինչ ներդրում ունի ընկերությունում, այդպիսով բարելավելով նրանց աշխատանքը: Համոզված լինելով, որ իր աշխատակիցների տարբերակվածությունը մեծագույն ակտիվ

«ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՇՈՐ ԱԿՏԻՎ Է ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»

Է իր գործունեության հաջողությունների համար, Վեոլիան ձգտում է նկատել յուրաքանչյուրի ջանքերն ու արժեքները, կիսել իր նախագիծերը եւ արժեքները աշխատակիցների հետ, որպեսզի նրանք կարողանան զգալ իրենց ներդրումն ընկերության գործունեության մեջ: Զգալ ինտեգրված, կարևոր և հավասար վերաբերմունք ստացող և, հասկանալ, որ իրենց ամենօրյա ներգրավվածությունն անհրաժեշտ է՝ բազմազանության, խտրականության բացառման եւ ունեւձգությունների ժխտման սկզբունքները խթանելու գործում:

Ամրապնդել համերաշխությունը

Իր գործունեության բնույթով, Վեոլիայի աշխատակիցները ակտիվորեն նպաստում են տղամարդկանց եւ կանանց կենսապայմանների բարելավմանն այն տարածքներում, որտեղ

գործում է գրուպը: Վեոլիան, բնականաբար, համերաշխությունն իր սոցիալական քաղաքականությունում դարձրել է հիմնական առանցքներից մեկը ամբողջ աշխարհում: Սոցիալական երկխոսության զարգացումը, առավել խոցելի աշխատողներին աջակցությունը, յուրաքանչյուրի կատարմանն ուղղված ուշադրությունը կարեւոր տեղ է զբաղեցնում մարդկային ռեսուրսների կառավարման գործում:

Մշակել աշխատողների աշխատունակությունը

Աջակցել աշխատակիցներին իրենց հմտությունները զարգացնելու գործում, ինչպես նաև խրախուսել նրանց կիսելու, թարմացնելու եւ բավարարելու իրենց մասնագիտական հմտությունները: Ընկերությունում աշխատակիցների հմտությունները գլխավոր հարստությունն է: Վեոլիայի՝ իր մարդկային ռեսուրսների ամենօրյա կառավարման բարելավման ցանկությունը ուղղորդվում է մասնագիտական վերապատրաստումների եւ կարիերայի աջակցության ակտիվ քաղաքականությամբ:

Այն վերաբերում է մշտապես ավելի լավ արձագանքելու մեր բիզնեսի կայուն զարգացմանը:

Կանխարգելի պատահարները, պահպանել առողջությունը և անվտանգությունը

Այն է թե, ամեն օր բարելավել կանխարգելման քաղաքականությունը, սերտորեն համագործակցելով աշխատակիցների և սոցիալական գործընկերների հետ:

Մեր հանձնառությունը, որը հիմնված է Աշխատանքի միջազգային կազմակերպության աշխատակազմի առողջության և անվտանգության սկզբունքների վրա, հիմնված է մեր աշխատակիցների աշխատանքային ամենօրյա պայմանների բարելավման համար առավել արդյունավետ լուծումներ գտնելու մեր ունակության վրա: Աշխատանքային վթարների և մասնագիտական հիվանդությունների կանխարգելումը, ղեկավարների հաշվետվողականությունը, աշխատակիցների տեղեկացվածությունը, աշխատանքի և անձնական կյանքի հավասարակշռությունը պահելու նկատմամբ հարգանքը և այլն, որոնք պահպանելու համար էլ սահմանվում է լավագույն փորձը՝ այն գրուպի ներսում տարածելու համար, որի օրինակն է Անվտանգության միջազգային շաբաթը, որը տեղի է ունենում ամեն տարի:

Վեոլիան, ամբողջ աշխարհում իր առաքելություններն իրականացնելիս, ձեռնարկում է իր աշխատողների անվտանգության համար անհրաժեշտ բոլոր միջոցները: Այս համատեքստում, պետական մարմինների հետ համագործակցությամբ, գրուպն իր տեղափոխության անվտանգության ներքին ընթացակարգով սահմանում է տարածքները և ռիսկային գործողությունները օպերացիոն քարտեզագրման համար, որն անհրաժեշտության դեպքում, ներառում է կանխարգելիչ և վերահսկող համապատասխան միջոցներ:

ՀԱՃԱԽՈՐՀՆԵՐԸ և ՃԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

Վեոլիան հաճախորդների հետ հարաբերություններում ապահովում է առաջին հերթին իր իրավական և պայմանագրային պարտավորությունների կատարումը: Կարգավորող չափորոշիչներից գատ, գրուպը պարտավորվում է լինել ուշադիր, պատկերացնել և իրականացնել լուծումներ, որոնք համապատասխանում են հաճախորդների կարիքներին և ակնկալիքներին՝ հանրային և մասնավոր, ինչպես նաև այն շահառուների, ովքեր իրեն վստահում են:

Վեոլիան հատկապես ձգտում է իր հաճախորդների և համապատասխան դերակատարների հետ զարգացնել հարմարեցված առաջարկներ, բարելավելու բոլոր անհրաժեշտ ծառայություններ հասանելիությունը: Ակտիվների ամբողջականության պահպանումը և պաշտպանությունը ծառայությունների որակի և գրուպի գործունեության երաշխիքն է:

«ԱԿՏԻՎՈՐԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԳՐԱՎՄԱՆԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»

ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ և ՃԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐ

Վեոլիան, համապատասխան կանոնակարգերի համաձայն, իր մատակարարների և ծառայություններ մատուցողների ընտրության օբյեկտիվ չափորոշիչներ է սահմանում:

Այս չափանիշները հիմնված են մատակարարների կատարողականի վրա, ինչպես նաև նրանց հարգանքի՝ ընկերության արժեքների և գրուպի կողմից սահմանված էթիկայի և կայուն զարգացման կանոնների նկատմամբ: Մատակարարների հետ կապի՝ կանոնադրության մեջ նշված հիմնական արժեքների շարքում, որը թելադրում է մատակարարների ընտրությունը, մասնավորապես նշում է հարկադիր աշխատանքի կամ մանկական աշխատանքի արգելումը:

Վեոլիան իր մատակարարների, ծառայություններ մատուցողների և հաճախորդների հետ հարաբերություններում, առաջնային է համարում պետական կամ մասնավոր գործակալների կոռուպցիայի դեմ պայքարը: Վեոլիան հատկապես ուշադիր է, որ իր աշխատակիցները ստանան նվերներ կամ հրավերներ միայն բացառիկ դեպքերում՝ իրենց անունով, ոչ կանխիկ և ցածր արժեքի: Կասկածի դեպքում, նա իր գործընկերներին կոչ է անում դիմել իրենց ղեկավարներին:

Վեոլիան ձգտում է հետևել ենթակապալառույն և արտաքին ընկերությունների հետ հարաբերությունների կանոնակարգերին, հատկապես առողջության և անվտանգության ոլորտներում: Առետարային միջնորդի օգնությամբ, Վեոլիան կատարում է որոշակի խմբային ընթացակարգ՝ ապահովելու համար իր ամբողջականությունը: Այս ընթացակարգը հնարավորություն է տալիս հավաստիացնել ծառայություն մատուցողների ընտրությունը, վերահսկել նրանց գործունեությունը և վարձատրության չափը ըստ ստանդարտ պայմանագրի ձեվի, ինչպես նաև ապահովել նրանց ծառայությունների իրականացումը՝ խիստ կանոններով:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարում, ռիսկի կանխարգելում և կրթություն

Ի դեմս բնապահպանական կառավարման համակարգի ներդրման՝ Վեոլիան ունի գործիք ուղղված սահմանափակելու՝ իր կամ իր հաճախորդների գործունեության արդյունքում շրջակա միջավայրի վրա թողած հետևանքները և կանխարգելելու կամ նվազեցնելու արդյունաբերական, առողջապահական և բնապահպանական ռիսկերը: Ավելի լայն վերցրած, աշխատողներին և հաճախորդներին կրթելը շրջակա միջավայրի և առողջության պահպանման շրջա առաջնահերթություն է գրուպի համար: Այս համատեքստում Վեոլիան զարգացնում է կրթության կամ իրագրված հատուկ ծրագրեր:

Երկխոսություն շահագրգիռ կողմերի հետ

Կայուն զարգացմանը նվիրված ընկերության կառուցման մեջ հասարակության ներգրավվածությունն ընդգրկում է՝ Վեոլիայի երկխոսությունը տարբեր շահագրգիռ կողմերի հետ, հատկապես իր գործունեության տարածքներում գտնվող բնակչության, հասարակական կազմակերպությունների և այլ քաղաքացիական բնակչության հետ: Այսպիսով Վեոլիան փորձում է հասցնել տեղական երկխոսությունները միջազգային մակարդակի:

Հովանավորություն

Գործընկերությունները ցույց են տալիս գրուպի տնտեսական, սոցիալական և բնապահպանական նվիրվածությունը հասարակությանը: Նրանք բոլորը շահագրգիռ կողմերի հետ հարաբերությունների ամրապնդման միջոց են՝ հիմնված արժեքների նկատմամբ հարգանքի վրա, նպատակ ունենալով աջակցել տարածքների զարգացմանը և դրանց արժևորմանը: Վեոլիայի գործընկերության պարտավորությունները ներառում են հովանավորական գործարքները, որոնք վերանայվել են վավերացվել

են հատուկ հանձնաժողովների կողմից՝ լավագույն փորձի հիման վրա: Դրա գործողությունները փոխանցվում են տեղական նախաձեռնությունների կողմից գործառնական անձանց մակարդակով:

Բարեգործություն

Վեոլիայի համերաշխության բարեգործական նախաձեռնությունները ըստ էության խմբավորված են եւ համակարգվում են Վեոլիա հիմնադրամի շրջանակներում, որը պաշտպանում է շահույթ չհետապնդող հանրային շահագրգիռ գործողությունները, որոնք պայքարում են շրջակա միջավայրի պահպանման համար՝ երեք հիմնական առաջնահերթային ուղղություններով.

- Մարդասիրական օգնության արտակարգ իրավիճակների պարագայում եւ զարգացման օժանդակություն ջրի հասանելիության, էներգիայի կառավարման եւ թափոնների վերամշակման ոլորտում,
- Սոցիալական կապի եւ զբաղվածության մակարդակի բարձրացման աջակցություն,
- Շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանման ոլորտում:

ԲԱԺՆԵՏԵՐԵՐ ԵՒ ՆԵՐԴՐՈՂՆԵՐ

Կառավարումը, ֆինանսական էթիկան եւ ֆրանսիական ֆոնդային բորսայի կանոնների պահպանումը

Վեոլիան, որպես բորսայում գրանցված ընկերություն, հավատարիմ է ֆրանսիական «AFEP / MEDEF կորպորատիվ կառավարման կանոնագիրք»-ին, որը սահմանում է տնօրենների խորհրդի եւ նրա հանձնաժողովների կազմը եւ գործունեությունը կարգավորող սկզբունքները (ներառյալ Հաշվապահական հաշվառման եւ աուդիտի կոմիտեն), գործադիր կորպորատիվ աշխատակիցների եւ տնօրենների խորհրդի անդամների վարձատրությունը, ինչպես նաեւ այս ոլորտում բաժնետերերին եւ շուկաներին տրամադրվող տեղեկությունները:

Բացի այդ, խումբը ընդունել է «Ֆինանսական տնօրենին վարքագծի կանոնագիրք»-ը, որը սահմանում է ֆինանսական եւ հաշվապահական տեղեկատվության հավատարմագրման համար պատասխանատու անձանց վարքագծի կանոնները եւ նպատակ ունի դրանք ենթարկելու ամբողջականության, ջանասիրության, ներքին վերահսկողության եւ ֆինանսական կապի մոնիտորինգի հատուկ պարտավորություններին:

Վեոլիան նաեւ ներդրել է արժեթղթերի գործարքների վարքագծի կանոնագիրք, որը նախատեսված է ներքին առետորի կամ խախտումների վերաբերյալ ֆոնդային բորսայի օրենքների խախտման դիսկի կանխարգելման համար: Այս կանոնագիրքը հիշեցնում է ղեկավարներին եւ աշխատակիցներին իրենց տրամադրված ցանկացած արտոնյալ տեղեկություն զաղտնի պահել եւ ձեռնպահ մնալ Վեոլիայի բաժնետոմսերի վաճառքից, մինչեւ այդ տեղեկությունը հասանելի կլինի շուկայի համար: Վեոլիան ձգտում է կիրառել այս վարքագծի դրույթները ղեկավարների եւ աշխատակիցների կողմից, ովքեր տիրապետում են արտոնյալ տեղեկատվության, պատահականության սկզբունքով ներքին ցուցակների ստեղծման միջոցով:

Վեոլիան համապատասխանում է ֆրանսիական բորսայի կանոններին. այս նպատակով նա սահմանել է կիրառելի վարքագծի եւ զգոնության կանոններ իր բոլոր փաստաբանների, ներքին եւ արտաքին խորհուրդների համար:

Շուկաների կապը

Վեոլիան ապահովում է հաշվապահական և ֆինանսական տեղեկատվության անհրաժեշտ հավաստիությունը: Ներքին ֆինանսական վերահսկողությունը նախատեսված է հավաստիացնելու, որ կազմակերպության հաշվետվությունները ճշգրիտ և ազնիվ են, որ գործարքները կանոնավոր կերպով լիազորված են, որ ամեն ջանք գործադրվում է խուսափելու խարդախությունից կամ չթույլատրված առեստրից և այսպիսով ձեռնպահ մնալուց գրուպի համախմբված հաշվվեցրում կատարված գործարքների վատ կամ կեղծ լինելուց:

Ֆինանսական հաղորդակցությունը, որը ստեղծել է ֆինանսական կապի կոմիտեն և որի առաքելությունն է ստեղծել և պահպանել ընթացակարգեր` տարեկան զեկուցներում պարունակվող տեղեկատվությունների հավաստիությունն ու վերահսկումն ապահովելու նպատակով, մեծ ուշադրություն է դարձնում Վեոլիայի համակարգի ներսում այս երևույթներին:

Ընդհանուր առմամբ, ֆինանսական հաղորդակցության նպատակը հսկողության և հստակ ընթացակարգերի պահպանումն է Վեոլիայում:

Այն կառավարվում է օրական կտրվածքով ֆինանսական կապի ստորաբաժանման կողմից, որը հաստատում է համակարգում է իր գործողությունները Գործադիր տնօրինության և գործընթացում ներգրավված Վեոլիայի տարբեր ֆունկցիոնալ բաժանմունքների հետ:

ՄՐՏԱԿԻՑՆԵՐԸ

Երկրների մեծամասնությունում, որոնցում գործում է գրուպը, ընդունել են մրցակցային օրենքներ, որոնք նպաստում են ազատ և անկաշկանդ մրցակցությանը: Վեոլիան պահանջում է իր բոլոր աշխատակիցներին մշտապես հետևել *«Մրցույթի իրավունքի հանդեպ հարգանքի կանոնների ուղեցույց»*-ում ներառված կանոնակարգերին: Վեոլիան նաև խրախուսում է յուրաքանչյուր աշխատակցի բացահայտել պոտենցիալ մրցակցային մտահոգությունների ոլորտները և, բացահատելու պարագայում, խորհրդակցել իր բաժնի համակարգողի և ընկերության իրավաբանների հետ:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Վեոլիա Գրուպը թափանցիկ կերպով նպաստում է կանոնակարգերի և հանրային քաղաքականության մշակմանը, փորձաքննությունը հասանելի դարձնելով պետական մարմիններին: Այս շահագրգիռ ներկայացուցչական գործունեությունը կազմակերպված է խմբի կողմից սահմանված ներքին չափանիշներին համապատասխան, համաձայն գործող ազգային և վերազգային իրավական շրջանակներին: Ինստիտուցիոնալ գործողությունների միջոցով Վեոլիան օգնում է բոլոր շահագրգիռ կողմերին տեղեկանալ գործունեության ոլորտի կանոնակարգերի և պետական քաղաքականության ազդեցությունների և հետեւանքների մասին:



ՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Իր արժեքներն ու վարքագծի կանոնները իրականացնելու համար Գրուպն իր կազմում հիմնել է կազմակերպություն եւ սահմանել ներքին ընթացակարգեր: Դրանք համապատասխանում են ուղեցուցում ընդգրկված տարբեր թեմաներին եւ ենթակա են տեղեկատվական միջոցառումների իրականացմանը եւ ներքին իրազեկվածությանը, ինչպես նաեւ իրավական եւ ֆինանսական մշտադիտարկման կանոններին եւ վերահսկմանը:

ՆՐԱՆՔ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵՆ ՀԵՏԵԻՅԱԼ ՕՐԱԿԵՆՐԻՑ:

Էթիկայի հանձնաժողով:

Այս հանձնաժողովը կազմված է le Comex de Veolia Environnement-ի կողմից նշանակված հինգ անդամներից, որոնք կարող են լինել աշխատակիցները, նախկին աշխատակիցները կամ կողմնակի անձինք, որոնք ապահովվում են անկախության երաշխիքներ եւ պահանջվող անհրաժեշտ հմտություններ: Անկախ իրենց առաքելության իրականացումից, կոմիտեի անդամները չեն կարող ստանալ հրահանգներ գործադիր խորհրդից, ոչ էլ կարող են զրկվել իրենց

մադատից, որը վերականգնվում է չորս տարին մեկ:

Վեոլիայի Էթիկայի հանձնաժողովը պատասխանատու է Էթիկայի ուղեցուցում նշված հիմնարար արժեքների պատշաճ իրականացման համար, որոնց հարում է կազմն ու նրա բոլոր աշխատակիցները:

Որպես այդպիսին, Էթիկայի հանձնաժողովի առաքելությունն է.

- Ներկայացնել ցանկացած առաջարկություն, որը վերաբերում է հիմնարար արժեքներին եւ Վեոլիայի սկզբունքներին՝ լինի դա քննարկված

«ՎԵՈՒԱՅԻ ԷԹԻՎԱՅԻ ՊԼԱՏՖՈՐՄԻ ՄԻՋՈՑՈՎ ԷԹԻՎԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ»

- թեմաների, թե հաջորդիվ տրված հարցերի վերաբերյալ:
- Կախված տվյալ համատեքստից, ապահովել ամբողջ խմբի աշխատակիցների կողմից բարոյական ուղեցուցի տարածումն ու ըմբռնումը:
- Առաջարկել Էթիկայի ուղեցուցում լրացումներ կամ ճշգրտումներ:
- Գրավել գործադիր կոմիտեի եւ Վեոլիային շահագրգիռ ընկերությունների ուշադրությունը Էթիկայի ուղեցուցի կողմից նպաստած արժեքների եւ սկզբունքների հետ համապատասխան մասնագիտական վարքագծի պատշաճության վրա:
- Անհրաժեշտության դեպքում զեկուցել շահագրգիռ անձանց վարքագծի սխալները, որոնք հակասում են խմբի արժեքներին եւ վարքագծի կանոններին:

Էթիկայի հանձնաժողովը լիազորված է բոլոր անհրաժեշտ իրավասություններով իր գործառույթները ֆրանսիայում եւ արտերկրում գտնվող Վեոլիայի ընկերությունների նկատմամբ իրականացնելու համար. այդպիսով նա կարող է ստանալ պահանջվող փաստաթղթերը եւ լսել խմբի բոլոր անդամներին, իր աուդիտորներին եւ ցանկացած երրորդ կողմի:

Իր առաքելության իականացման համար, նա կարող է խնդրել Վեոլիայի ներքին աուդիտի ստորաբաժանմանը միջամտել Էթիկայի ուղեցուցի վերաբերյալ ցանկացած հարցի: Սա կարող է նաեւ դիմել արտաքին փորձագետների ծառայություններին եւ այցելել Գրուպի որեւէ ընկերության ցանկացած կայքէջ: Սա տարեկան զեկուցում է Վեոլիայի շրջակա միջավայրի տնօրենների խորհրդին:

«Էթիկայի թղթակիցների» ցանց
Թղթակիցների տեղական ցանցը մասնակցում է գրուպի Էթիկայի քաղաքականության իրականացմանը: Կոմիտեն ունի «Էթիկայի թղթակիցների» ցանց, որը երկրի ղեկավարն է եւ ով, ի դեմս դրա, մասնակցում է գրուպի Էթիկայի քաղաքականության իրականացմանը:

Իր պարտականությունների շրջանակներում Էթիկայի հանձնաժողովը մեկնաբանում է Էթիկայի ուղեցուցը՝ հաշվի առնելով խմբի ընկերությունների բազմազանությունը, նրանց գործունեության առանձնահատկությունները, կարգավորող իրավական դաշտը, եւ սոցիալական երկրները, որտեղ դրանք գործում են:

ՄԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՅՈՒՆԸ

Գրուպի զգոնության իրավունքից

Ցանկացած աշխատակից, ով կասկածում է ինչ-որ մեկի այս ուղեցուցում սահմանված վարքագծի կանոններին չհամապատասխանելու մասին եւ գտնում է, որ իր ուղղակի ղեկավարին դրա մասին տեղեկացնելը անբավարար է, կամ եթե չի բավարարում վերջինիս կողմից տրված պատասխանը, հնարավորություն ունի այդ հարցը հանձնարարել Էթիկայի հանձնաժողովին անկախ մարմնի միջոցով, որը «*Veolia Ethics Platform*»-ն է:

Այս ուղղումը պետք է կատարվի օրենքով եւ այդ երկրում կիրառվող կանոնների համաձայն, որտեղ աշխատողը բնակվում է (կամ) իրականացնում է իր գործունեությունը:

Այն անազանները, որոնք իր վերահսկման ոլորտում են գտնվում (կոռուպցիայի, առետրի վրա ազդեցության, հակամրցակցային պրակտիկայի, շրջակա միջավայրի մասին օրենքի խախտումների, փողերի լվացման եւ անաբեկչության ֆինանսավորման, մարդու իրավունքների մասին օրենսդրության

խախտումների) Էթիկայի հանձնաժողովն զգուշացնելու համար ուղարկում է գրուպի վերահսկման բաժին, որը ստանալուց հետո մշակում է տեղեկատվությունը և գործընթացի վերաբերյալ հաշվետվություն է կազմում, իսկ հետո տեղեկացնում է դրա փակման մասին:

Այլ անազանները մշակվում են Էթիկայի հանձնաժողովում` ուղղակիորեն կամ տվյալ երկրի պատվիրակների միջոցով, որոնք ուղղակիորեն ենթարկվում են գրուպին:

Վեոլիան, ինչպես եւ Էթիկայի հանձնաժողովը, երաշխավորում է աշխատակիցների, ձեռբակալված անձանց եւ անազանգի համատեքստում ենթադրվող փաստերի վերաբերյալ ընդհանուր գաղտնիությունը:

Նմանապես, պարտավորվում է, որ ոչ մի աշխատակից չպետք է խտրական վերաբերմունք ցուցաբերի որեւէ ձեռով, ներառյալ` ոտնձգության կամ այլազրկման գործողություններ` զգուշացնելու իրավունքի ոտնահարման նպատակով:

Վեոլիայի` Էթիկական զգոնության իրավունքի օգտագործման կանոնադրությունը հասանելի է աշխատողների համար:

Երրորդ անձիք կարող են ուղակիորեն դիմել Էթիկայի կոմիտե *Whispli* հարթակի միջոցով, և, ինչպես նախկինում, էլեկտրոնային փոստով (*ethique.ve@veolia.com*) կամ հեռախոսով (+33 1 85 57 76 76): Խոսքը վերաբերում է մասնավորապես այն փաստերին, որոնք դիտարկվում են որպես կոռուպցիայի դեպք կամ ազդեցության չարաշահում:

Այս ուղեցուցին կցված է *հակակոռուպցիոն վարքագծի կանոնագիրը*:

«Վեոլիա» ընկերության լուսանկարադարան՝ Սալահ Բենասեր, Ալեքսանդր Դյուպեյրոն, Օլիվիե Գերեն, Ստեֆան Լավուե, Կրիստոֆ Մաջանի դը Ինգիմբեր, Ջանաթան Ռոբեր, ՕԼՕ պատկեր/Մաթթոն, Օնոկի/Մաթթոն, Ֆոստո Ալտո:

Գծանկարչական կոնցեպցիա՝ Իկոնետ
Հրատարակում՝ 2021 թվականի մայիսին:

Ռեսուրսավորելով աշխարհը

Veolia Environnement

Ֆիզիկական հասցե

30, rue Madeleine Vionnet - 93300 Aubervilliers - France

Իրավաբանական հասցե

21, rue de la Boétie - 75008 Paris - France

www.veolia.com